
ՌՈՒԶԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ. Գրական վավերագրեր (1920–1930-ական թվականներ), *հ. 1, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2020, 832 էջ* *:

Բանալի բառեր՝ գրական վավերագրեր, 1920–1930-ական թվականներ, խորհրդահայ մամուլ, տեսական-քննադատական միտք, գրական-հանրային կյանք, «Դեկլարացիա երեքի», «Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա», գրական բանավեճեր, «Նոյեմբեր»:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի նորագույն շրջանի հայ գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Ռուզան Արիստակեսյանը ձեռնամուխ է եղել «Գրական վավերագրեր (1920–1930-ական թվականներ)» վերնագրով քառահատորյակի հրատարակությանը: Այն ներկայացնելու է խնդրո առարկա ժամանակաշրջանում խորհրդային մամուլում տպագրված գրական վավերագրերը, որոնք լուսաբանում են ժամանակի տեսական-քննադատական միտքն ու գրական կյանքը: Ընթերցողի սեղանին է դրվել քառահատորյակի 1-ին հատորը, որն ընդգրկում է 1922–1925 թվականները: Գիրքը տպագրության է երաշխավորել Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհուրդը, գիտական խմբագիրն է Բ. Գ. Պ., պրոֆեսոր Դ. Վ. Գասպարյանը: 300 տպաքանակով մեծադիր էջերով (832 էջ) շքեղ հատորը տպագրվել է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ի տպարանում:

Գիրքը բացվում է «Խմբագրի խոսք»-ով, որին հաջորդում է «Առաջաբան»-ը: Այստեղ Ռ. Արիստակեսյանը հանգամանորեն շարադրել է քառահատորյակում ընդգրկվելիք նյութերի դատաստան սկզբունքները, այն է՝ «համակարգված ներկայացվում են տվյալ ժամանակաշրջանի գրաքննական-տեսական միտքը և գրական-հանրային կյանքն արտացոլող վավերագրեր՝ գրախոսություններ, գրական դիմանկարներ, բանավիճային հոդվածներ, տեսական անդրադարձներ, գրական քաղաքականությանը վերաբերող կուսակցական որոշումներ, բանաձևեր, ելույթներ ու խմբագրականներ, գրական

* Ներկայացվել է 03. IX. 2020 թ., ընդունվել է տպագրության 25. IX. 2020 թ.:

հանգանակներ ու պարբերականներ, ինչպես նաև գրական կյանքի անցուդարձ, բարքեր ու հարաբերություններ: Սա, ըստ էության, 1920–1930-ական թվականների գրական կյանքի յուրատեսակ հանրագիտարան է» (էջ 3):

Հատորում փաստագրական հսկայածավալ՝ 555 վավերագիր, նյութը դասդասելիս Ռ. Արիստակեսյանն առաջնորդվել է ժամանակագրական սկզբունքով: Դա հնարավորություն է տվել գրապատմական փաստերն ու իրողությունները ներկայացնել զարգացման օրինաչափությունների ընթացքում, հասարակական-քաղաքական պայմանների և գրական-ստեղծագործական մոտեցումների հարափոփոխ շղթայում: Յուրաքանչյուր տարի ներկայացվում է հստակ բաժանումներով: Ահա, այսպիսիք.

1. Տեսական-քննադատական բաժին. այստեղ տեղ են գտել ժամանակի գրական-գեղարվեստական մտածողությունը ներկայացնող գրախոսություններ, գրական դիմանկարներ, տեսական անդրադարձներ և բանավեճեր: Առանձին ենթաբաժին են կազմում նաև գրական կարևոր խորհրդակցություններն ու հրապարակային քննարկումները:

2. Գրական քաղաքականություն բաժինն ընդգրկում է պաշտոնական այն բոլոր բանաձևերն ու որոշումները, որոնք պայմանավորել են գրական կյանքի ընթացքը և ուղղվածությունը, ինչպես նաև առանցքային այն հոդվածները, խմբագրականներն ու անդրադարձները, որոնք այս կամ այն կերպ առնչվել են այդ քաղաքականությանը: Բաժնում զետեղված են Հայաստանի խորհրդայնացման հոբելյանների առթիվ գրողների արձագանքները:

3. Գրական դատեր բաժին. ներկայացվում է այդ տարիներին լայն տարածում ունեցող գրական դատեր անցկացնելու փորձը:

4. Գրական հանգանակներ բաժնում զետեղված են գրական այս կամ այն պարբերականի ստեղծագործական խնդիրներն ու նպատակները ներկայացնող առաջնորդողներ, գեղագիտական-ծրագրային փաստաթղթեր («Նոյեմբեր»-ի դեկլարացիան):

5. Գրական պարբերականներ բաժնում առանձին պարբերականների ամբողջական օրինակներն են: Այստեղ հաշվի է առնվել կա՛մ դրանց առանձնահատուկ նշանակությունը («Standard», «Նոյեմբեր»), կա՛մ դրանց կապակցությամբ հնչած կարևոր արձագանքները («Կոկորդիլոս»):

6. Գրական կյանքի ժամանակագրություն. բաժնում ամփոփվում են գրական տարբեր միջոցառումներ, գրական անցուդարձին առնչվող փաստեր և հաղորդումներ:

Առանցքային այս բաժիններից բացի, հատորում կան նաև այնպիսի բաժիններ, որոնք ներկայացնում են գրական կարևոր փաստեր, առանց որոնց ժամանակի գրական կյանքի համապատկերը թերի կլիներ: Ահա այսպիսիք. «Դեկլարացիա

երեքի», «Հայաստանի պրոլետարական գրողների միություն», «Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա», «Հիշողություններ և տպավորություններ» և այլն:

Փաստագրական նյութերը հավաքելիս Ռ. Արիստակեսյանն աշխատել է հնարավորինս ամբողջական ներկայացնել գրական ժամանակը՝ ուշադրությունից բաց չթողնելով գրապատմական կարևորություն ներկայացնող և ոչ մի իրողություն: Նկատենք, որ այս ամենի սկզբնաղբյուրը խորհրդահայ մամուլն է՝ Երևանում, Լենինականում (Գյումրիում), Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում հրատարակված պարբերականները: Ռ. Արիստակեսյանը հավաքել, դաստասել, համակարգել է ՀՀ Ազգային և ԳԱԱ գրադարաններում, Երևանի Մատենադարանում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, ՀՀ Ազգային արխիվում առկա պարբերականների հավաքածուներում եղած մեծաքանակ ու հսկայածավալ նյութերը: Հավելենք, որ դրանցից շատերը չեն դրվել գիտական շրջանառության մեջ, իսկ տպագրվածներում էլ կան բազմատեսակ վրիպումներ ու շեղումներ:

Հատորն ունի բովանդակային «Ծանոթագրություններ»: Տվյալ հոդվածի մասին տեղեկատվությունից զատ, դրանք պարունակում են հաղորդումներ խնդրո առարկա թեմայի այլ արծարծումների, հեղինակների այլ հրապարակումների վերաբերյալ: Այս բաժնում մատնանշվում են նաև ակադեմիական հրատարակություններում ու տարբեր ժողովածուներում առկա տարատեսակ վրիպումներ (նյութերի հրատարակության ամսաթվեր, պարբերականների համարներ, ստեղծագործությունների վերնագրեր, դրանց տպագրության տարեթվեր, ուղղագրական-կետադրական անհարկի սրբագրումներ, գրության բնագրային ձևերի հետ անհամապատասխանություններ և այլն):

Գիրքն ունի նաև «Օգտագործված հապավումներ և համառոտագրություններ», «Օգտագործված պարբերականներ», «Օգտագործված ծածկանուններ», «Անձնանունների տեղեկատու» բաժիններ, որոնք լրացուցիչ տեղեկատվությամբ օժանդակում են փաստավավերագրական նյութի ամբողջացմանը:

Հիրավի, ներկայացվող հատորը 1922–1925 թթ. հայ գրական-հոգևոր կյանքի հավաքական հիշողությունն է, որի փաստավավերականությունը հնարավորություն է ընձեռում պատմավերլուծական ճշգրիտ հիմքերով ներկայացնելու մեր ազգային-հոգևոր կյանքի տարեգրությունը՝ առանց անհարկի սրբագրումների, կամայական վերագրումների և միտումնավոր աղավաղումների: Մա ժամանակի տեսական-գեղագիտական մտքի և գրական կյանքի համապատկեր-վկայագրություն է, որի նպատակն է եղել ի մի բերել, ամբողջացնել գրական կյանքն իր հարուստ բազմազանությամբ, կարևոր ու անկարևոր թվացող նյութերով, ընդունելի և այսօր արդեն ժամանակավրեպ

մոտեցումներով, ժամանակի գաղափարախոսության կնիքը կրող գնահատականներով (էջ 6):

Ինչպես գրում է Ռ. Արիստակեսյանը, հատորը կազմելիս հարազատ է մնացել մամուլի բնօրինակին և պահպանել է գրության բնագրային ձևերը: Գիրքը խոսումն դարձնելու նպատակով դրանում զետեղել է մամուլից ու Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի պահոցներից վերցված լուսանկարներ, զանազան ազդագրեր:

Կարելի է արձանագրել. կատարվել է տարիների տքնաջան աշխատանք, որի արդյունքում հատորում զետեղված (հուսանք՝ մնացյալ 3 հատորներում ևս) նյութերը կարող են օգտակար լինել ինչպես առանձին հեղինակների և նրանց ստեղծագործությունների ուսումնասիրության, այնպես էլ նրանց ժառանգության ամբողջացման, բնագրային ճշգրտումների ու լրացումների համար, կարող են դառնալ գրականագիտական-բանասիրական տարբեր հետազոտությունների առարկա:

Անշուշտ, իրավացի է Դ. Գասպարյանը, երբ «Խմբագրի խոսք»-ում կատարված աշխատանքին տալիս է ահա այսպիսի գնահատական. «Սա բացառիկ գիրք է՝ հայ գրականության 1920–1930-ական թվականների կենդանի, իրական պատմությունը: Խոսում, պատմում են վավերագրերը, մեկնաբանում, բացատրում է հետազոտողը: Այսպիսի համապարփակ վավերապատում ստեղծելու համար անհրաժեշտ է ոչ միայն հետևողական աշխատասիրություն, ոգու կորով, համբերություն ու համառություն, այլև գրականագիտական համապարփակ իմացություն, գրապատմական իրողությունները ճշմարիտ ու անկողմնակալ տեսնելու հայեցակարգ» (էջ 1):

Հիրավի, կատարված աշխատանքի համար պետք է շնորհակալություն հայտնել Ռուզան Արիստակեսյանին:

Եվ, այդուհանդերձ, մի նկատառում ունենք. կարծում ենք՝ հատորը պետք է ներկայացվեր իբրև աշխատասիրություն՝ կատարված Ռուզան Արիստակեսյանի կողմից, կամ էլ նա պետք է հանդես գար որպես առաջաբանի հեղինակ, հատորի կազմող, ծանոթագրող ու հրատարակության պատրաստող և ոչ թե որպես հեղինակ:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բ. Գ. Պ., ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարակազմի առաջին քառորդի հայ իրականության հարցեր, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-ռուս պատմագրական կապեր: Հեղինակ է 21 մենագրության ու ժողովածուի, շուրջ 227 հոդվածների ու հրապարակումների: patmhandes@rambler.ru